



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՅԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Գ Լ Խ Ա Վ Ո Ր Ք Ա Ր Տ ՈՒ Ղ Ա Ր

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Միեր Մկրտչյան 5^բ, հեռ.՝ (+374 10) 54 56 37, (+374 10) 54 19 00
 Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«25» 11 2019 թ.
 No ՍԿԿ-2810

«ՀԱՅԱՍԻ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
 (Հասցե՝ ՀՀ, Արագածուրնի մարզ, գ. Ոսկեվագ, Արագածի փ. 11-րդ նրբ., 11)

Հայտնում եմ Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի նոյեմբերի 12-ի «ՀԱՅԱՍԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի հնարավոր խախտման վերաբերյալ վարչական վարույթ հարուցելու մասին» թիվ 170-Ա որոշմամբ (այսուհետ՝ Թիվ 170-Ա որոշում) հարուցել է վարչական վարույթ:

Վարչական վարույթի շրջանակներում 2019 թվականի դեկտեմբերի 10-ին ժամը 11⁰⁰-ին Հանձնաժողովի գտնվելու վայրում (քաղաք Երևան, Մ. Մկրտչյան 5բ, 5-րդ հարկ) տեղի է ունենալու Հանձնաժողովի դռնբաց նիստ, որի ընթացքում քննարկվելու են Հանձնաժողովի Թիվ 170-Ա որոշմամբ հարուցված վարչական վարույթում առկա փաստական հանգամանքները:

«ՀԱՅԱՍԻ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը իրավունք ունի մասնակցելու Հանձնաժողովի նիստին, համապատասխան լիազորություններ ունեցող ներկայացուցիչների միջոցով՝ լիազորությունները հաստատող փաստաթղթերի առկայության դեպքում (անձը հաստատող փաստաթուղթ, լիազորագիր և այլն):

Ծանուցված անձանց չներկայանալը չի խոչընդոտում քննարկման անցկացմանը և որոշումների ընդունմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝  ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ